Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» N 173 որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	26.	Պետական և զորահավաքային ռեզերվների տեղաբաշխումը, փաստացի պաշարները, դրանց օգտագործումը բացահայտող տեղեկությունները՝ բացառությամբ արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջանալու դեպքում հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, մարդասիրական օգնության ցուցաբերման համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունների	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: